



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

24 հունվարի 2018 թ. № 7 - Ա/1

ք. Երևան

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՅԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔԱԿ»,  
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔԱՂԱՔ» ԵՎ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՅՈՒՂ»  
ՍՏՈՒԳԱՏԵՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «Ժ.1» կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության՝ հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ» հանրապետական ստուգատեսի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական քաղաք» հանրապետական ստուգատեսի կանոնակարգը՝ համաձայն № 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական գյուղ» հանրապետական ստուգատեսի կանոնակարգը՝ համաձայն № 3 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ  
«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԿ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ» հանրապետական ստուգատեսի (այսուհետ՝ Ստուգատես) նպատակներն են՝

1) ըստ բնակության վայրի ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների բարելավում,

2) բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, առողջ ապրելակերպի ձևավորում:

2. Ստուգատեսի խնդիրներն են՝

1) բակերում ընդհանուր ֆիզիկական պատրաստականության և առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների՝ պարզ տիպի խաղահրապարակների և խաղասենյակների ստեղծում, դրանց արդյունավետ օգտագործում,

2) բնակչության, մասնավորապես՝ նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում:

2. ԺԱՄԿԵՏԸ

3. Ստուգատեսն անցկացվում է երկու փուլով՝

1) մարզային և Երևանի քաղաքային փուլ՝ սեպտեմբեր ամսին,

2) հանրապետական փուլ՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4. Ստուգատեսի անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են՝

1) 1-ին փուլում՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից ստեղծված հանձնաժողովները,



2) հանրապետական փուլում՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից ստեղծված հանձնաժողովը:

#### 4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Ստուգատեսին մասնակցում են Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքների և Երևան քաղաքի վարչական շրջանների բակերը:

6. Ստուգատեսում հաղթող բակը որոշվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

1) խաղահրապարակների, մարզահրապարակների, խաղասենյակների կամ հանգստի տաղավարների առկայությունը,

2) պարզ տիպի մարզասարքերի (տարբեր բարձրության պտտածողեր, ճոճանակներ, զուգափայտեր, սահելու, մագլցելու և ձգումներ կատարելու հարմարանքներ, սարքեր և այլն), ավազահրապարակների, ցատկափոսերի և այլնի առկայությունն ու դրանց վիճակը,

3) մարզագույքով ապահովվածությունը, բնակչության հանգստի անցկացման համար այլ պայմանների առկայությունը,

4) բակի տարածքի ընդհանուր սանիտարահիգիենիկ պայմաններն ու կանաչապատվածությունը,

5) բակի նարածքում մասսայական ֆիզկուլտուրան և սպորտը, առողջ ապրելակերպը քարոզող միջոցների (ազդանկարներ՝ պլակատ, վահանակներ և այլն) առկայությունը:

7. Ստուգատեսին կարող են մասնակցել միայն համայնքում նոր կառուցված և հիմնովին վերանորոգված մարզական բակերը: Մրցանակային տեղեր զբաղեցրած բակերը հաջորդ մասնակցության դեպքում կարող են հանդես գալ միայն նոր ձեռքբերումներով:

8. Ստուգատեսին մասնակցել ցանկացող համայնքը մինչև հայտ ներկայացնելը նախօրոք պետք է կատարի նկարահանումներ՝ մանրամասն ֆիքսելով շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի երևա բակի նախնական և վերջնական տեսքը: Նկարահանված տեսանյութերը հայտի հետ միասին ներկայացնելը պարտադիր պայման է. հակառակ դեպքում հայտը չի ընդունվի:

#### 5. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

9. Հայաստանի Հանրապետությունում մրցանակային տեղեր զբաղված մարզական բակերը պարգևատրվում են վկայագրերով և համապատասխանաբար 1000.0 հազար (մեկ միլիոն), 600.0 հազար (վեց հարյուր հազար) և 400.0 հազար (չորս հարյուր հազար) դրամ դրամական մրցանակներով:

10. Պարգևատրման գումարները պետք է օգտագործվեն համայնքի մարզակառույցների վերանորոգման, բարեկարգման և անհրաժեշտ մարզագույքի

ձեռքբերման նպատակով: Ընդ որում, անհրաժեշտ է կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել Նախարարություն մինչև տվյալ օրացուցային տարվա սեպտեմբեր ամիսը:

## 6. ՀԱՅՏԵՐԸ

11. Քաղաքապետարանները, Երևանի վարչական շրջանները իրենց լավագույն մարզական բակերի հայտերը (Ձև 1) ներկայացնում են մարզապետարանների, Երևանի քաղաքապետարանի համապատասխան հանձնաժողովներին մինչև տվյալ օրացուցային տարվա սեպտեմբերի 20-ը:

12. Մարզապետարանները մեկական (Ձև 2), իսկ Երևանի քաղաքապետարանը երեք լավագույն բակերի հայտերը (Ձև 3) ներկայացնում են Նախարարություն մինչև տվյալ օրացուցային տարվա սեպտեմբերի 30-ը: Հայտերի հետ ներկայացվում են նաև լավագույն մարզական բակ(եր)ի համայնապատկերային լուսանկարը, տեսահոլովակ և բակի ու կատարված աշխատանքի նկարագիրը՝ հաստատված քաղաքապետի կողմից:

## 7. ԾԱԽՍԵՐԸ

13. Ստուգատեսում մրցանակային տեղեր գրաված մարզական բակերին դրամական պարգևների վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

14. Ստուգատեսի արդյունքների ամփոփման հանրապետական հանձնաժողովի անդամներին Հայաստանի Հանրապետության մարզեր գործուղելու ծախսերը կատարում են Հայաստանի Հանրապետության այն պետական մարմինները, որոնց ներկայացուցիչներն ընդգրկված են հանձնաժողովի կազմում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ



Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար  
«Լավագույն մարզական բակ» ստուգատեսի մարզային  
(Երևանի քաղաքային) փուլի մասնակցության

Մասնակից քաղաքի (Երևանի վարչական շրջանի) անվանումը -----  
Ներկայացվող մարզական բակերի հասցեները -----  
-----

----- քաղաքապետ (Երևանի վարչական շրջանի ղեկավար)՝ -----  
(ստորագրությունը)

-----  
(անունը, ազգանունը)

Կ. Տ.

----- 2018 թ.

Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար  
«Լավագույն մարզական բակ» ստուգատեսի  
հանրապետական փուլի մասնակցության

Մարզի, քաղաքի անվանումը -----  
Ստուգատեսի առաջին փուլին մասնակցած մարզական բակերի թիվը -----  
Մարզում հաղթող ճանաչված և հանրապետական փուլին մասնակցելու իրավունք ստացած  
բակ(եր)ի հասցեն (հասցեները) -----  
-----  
-----  
-----

ՀՀ ----- մարզպետ՝

-----  
(ստորագրությունը)

-----  
(անունը, ազգանունը)

Կ. Տ.

----- 2018 թ.

Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար  
«Լավագույն մարզական բակ» ստուգատեսի  
հանրապետական փուլի մասնակցության

Երևան քաղաքի վարչական շրջանի անվանումը -----  
Ստուգատեսի առաջին փուլին մասնակցած մարզական բակերի թիվը -----  
Երևան քաղաքում հաղթող ճանաչված և հանրապետական փուլին մասնակցելու իրավունք  
ստացած բակ(եր)ի հասցեն (հասցեները) -----  
-----  
-----

Երևանի քաղաքապետ՝

-----  
(ստորագրությունը)

-----  
(անունը, ազգանունը)

Կ. Տ.

----- 2018 թ.

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ**  
**«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔԱՂԱՔ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ**

**1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական քաղաքային» հանրապետական ստուգատեսի (այսուհետ՝ Ստուգատես) նպատակներն են՝

1) բնակչության ֆիզիկական դաստիարակության բարելավում, ակտիվ հանգստի կազմակերպում, առողջ ապրելակերպի ձևավորում,

2) ըստ բնակչության վայրի խաղահրապարակների արդյունավետ օգտագործում, մարզական միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ պայմանների ապահովում:

2. Ստուգատեսի խնդիրն է՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ տարվող աշխատանքների խթանում:

**2. ԺԱՄԿԵՏԸ**

3. Ստուգատեսն անցկացվում է երկու փուլով՝

1) մարզային փուլ՝ սեպտեմբեր ամսին,

2) հանրապետական փուլ՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

**3. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

4. Ստուգատեսի անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում են՝

1) մարզային փուլում՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կողմից ստեղծված հանձնաժողովները.

2) հանրապետական փուլում՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից ստեղծված հանձնաժողովը:



#### 4. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Ստուգատեսին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզերի քաղաքային համայնքները՝ բացառությամբ Երևան քաղաքի:

6. Ստուգատեսի հանրապետական փուլին յուրաքանչյուր մարզից թույլատրվում է մասնակցել մարզային փուլում լավագույնը ճանաչված մեկ քաղաքային համայնքի:

7. Ստուգատեսի 1-ին և 2-րդ փուլերում մրցանակային տեղերը համայնքների միջև որոշվում են համայնքների բնակչության թվի համամասնությամբ՝ հետևյալ ցուցանիշների հիման վրա.

1) մարզական խաղահրապարակ ունեցող բակերի թիվը,

2) բակային խաղահրապարակների, մարզահրապարակների, խաղասենյակների կամ տաղավարների առկայությունը, վերջիններիս կահավորվածությունն ու մարզագույքով հագեցվածությունը,

3) հանրակրթական դպրոցներում ու մանկապարտեզներում ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ տարվող աշխատանքների վիճակը,

4) մասնակցությունը մարզային, հանրապետական մրցաշարերին,

5) Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերում ընդգրկված և միջազգային մրցաշարերին մասնակցած մարզիկների թիվը,

6) համայնքում ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվողների թիվը՝ ըստ մարզաձևերի,

7) ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվողների թիվը, որից՝ դպրոցականներ,

8) համայնքային բյուջեից սպորտին հատկացված գումարների չափը,

9) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի մարզային փուլին մասնակցած մարզական ընտանիքների թիվը,

10) տվյալ օրացուցային տարվա ընթացքում համայնքում կազմակերպված և անցկացված զանգվածային մարզական միջոցառումների ու մասնակիցների թիվը (դրանք հաստատող փաստաթղթերի առկայությունը),

11) համայնքում գործող մարզադպրոցների գործունեությունը և ուսումնամարզական աշխատանքների վիճակը,

12) համայնքի տարածքում տեղակայված մարզակառույցները, դրանց ընդհանուր սանիտարահիգիենիկ վիճակը,

13) համայնքի տարածքում մասսայական ֆիզկուլտուրան և սպորտը, առողջ ապրելակերպը քարոզող միջոցների (ազդանկարներ՝ պլակատ, վահանակներ և այլն) առկայությունը:

8. Մրցանակային տեղեր զբաղեցրած քաղաքային համայնքները հաջորդ մասնակցության դեպքում կարող են հանդես գալ միայն նոր ձեռքբերումներով:

9. Ստուգատեսին մասնակցել ցանկացող համայնքը մինչև հայտ ներկայացնելը նախապես պետք է կատարի նկարահանումներ՝ մանրամասն ներկայացնելով համայնքում ընթացիկ տարում կատարված աշխատանքներն ու ձեռքբերումները (*մարզական-մասսայական միջոցառումների անցկացում, մարզական նվաճումներ, մարզահրապարակների-մարզադահլիճների կառուցում-վերանորոգում*), ինչպես նաև պետք է ներկայացնի ամփոփ տեղեկանք կատարված աշխատանքների վերաբերյալ՝ հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար: Նկարահանված տեսանյութերը և ամփոփ տեղեկանքը հայտի հետ միասին ներկայացնելը պարտադիր պայման է. հակառակ դեպքում հայտը չի ընդունվի: